ՆԱԶԱՐ.– Ուստիան, դո՛ւռը բաց, աւազակները գալիս են:

ՈՒՍՏԻԱՆ.– Գնա ճաքի՛, չե՛մ բանա:

ՆԱԶԱՐ.– (Ուրիշ կողմից) Բա՛ց արա դուռը, աւազակներն եկան, զէնքերս պիտի կապեմ:

ՈՒՍՏԻԱՆ.– (Պատից վայր է բերում Նազարի ժանգոտ սուրը, վերցնում է դրօշակը, չուխան եւ դռան արանքից դուրս է լցնում։) Ա՛ռ անտէրներդ, չքուի գնա՛:

ՆԱԶԱՐ.– Հիմի Էս մթանը ո՛ւր գնամ:

ՈՒՍՏԻԱՆ.– Գնա Դաղստան, գլուխդ պահի: Էլ քեզ կնիկ չե՛մ, (Պառկում է։)

ՆԱԶԱՐ.– (Վերցնում է չուխան հագնում, զէնքը կապում է, դրօշակը բռնում) Ուստիա՛ն, եկա՛ն… (Նայում է անտառի կողմը եւ կուչ գալիս դռան մօտ) Եկա՛ն: Բը՛, բը՛, բը՛… (Աւելի բարձր) Բը՛, բը՛, բը՛… (Աւելի բարձր) Բը , բը, բը … Ո՞ւմ վրայ էք գալիս… Կայծե՛րդ կհանեմ… Բը՛, բը՛, բը՛… Էհե՛յ… (Փախչում է տան հետեւը ձախ կողմից։)

ՍԱՔՈ.– (Ծառերի միջից ներս գալով աջակողմը, ճերմակ փափախը գլխին) Ամա՛ն աստուածասէ՛ր, տո՞ւն է, գե՞ղ է, ո՞վ կա, հա՛սէք, ճամփէն կորցրել ենք:

ՈՍԿԱՆ.– (Առաջ գնալով նրա հետեւից նոյնպէս ճերմակ փափախով) Ա՛յ տղա ձին կապի ծառից, տեսնենք ո՞ւր ընկանք:

ՍԱՔՈ.– Ա՛ման, Ոսկան, ձեռից գնացինք: Ջահանդամ-դարասին ենք ընկել:

ՈՍԿԱՆ.– Աստուած ողորմած է: Մի՛ վախի, Սաքո:

ՆԱԶԱՐ.– (Մօտենալով, ձախից, բայց դեռ չի երեւում) Քաջ Նազարն եմ հա, մի՞ն կզարկեմ, կջարդեմ հազա՛ր:

ՍԱՔՈ.– Ա՛ման, Ոսկան, էս ի՞նչ Քաջ Նազար է:

ՈՍԿԱՆ.– Չեմ իմանում: Նստի, ժամ մի գա: (Կուչ են գալիս թփերի մէջ։)

ՆԱԶԱՐ.– Համբո՞: Բուրջի ծերի՞ն ես: Լաւ մտիկ տուր, դէմիցը քարուան է գալիս: Թէ Քեռօղլունն է, կտրենք: Էգուց Սարդարի մօտ ճաշի ենք: Ընծա տանենք: Էս է ձիս թամբում եմ: Տղե՛րք, դուք էլ պատրաստուեցէք: (Լռութիւն։ Ինքն իրեն հարց է տալիս) Քաջ Նազար, էդ ո՞ւմ հետ ես խօսում: (Պատասխանում է) Ա՛շի, բեզարեցի էդ Քեռօղլու զօրքը ջարդելուց, տղերանցը տանում եմ: Գնանք ջարդենք: (Հարց է տալիս) էդ Քեռօղլուց վազ չես գալիս, էլի՛: Մե՛ղք է, բաշխի: (Պատասխանում է) Չէ՛, պիտի գլուխը աղեմ. (ականջ է դնում) է, ո՛վ կա էդտեղ, Համբո, էդտեղ մինը կանգնել ականջ է դնում, տես ո՞վ է, բռնի բե՛ր: Բռնեցի՞ր: Պոկի վիզը: Պոկեցի՞ր: Հա՛, դէ լաւ, դեն գցի: էդպէ՛ս:

ՍԱՔՈ.– Ա՛ման, վա՛յ թէ մեր օրն էլ էստեղ պիտի հատներ: